ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 14.13/[133420]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԺԱՄԸ 17:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ <<ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ժ. Կարասլյան	<<Լույս>> հիմնադրամի կրթական ծրագրի տնօրեն
Ա. Խաչատուրյան	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Քոչարյան	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Հ. Գրիգորյան	Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվության անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ռ. Թոփչյան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն
Ս. Կարախանյան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի քաղաքականության մշակման և իրականացման վարչության ղեկավար
Ն. Բալայան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի իրավաբան

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE» FOUNDATION
ՄՈՏՏԲ N 4-12/11-147-28
«7» 11 2012 թ.

Կ. Դիտրիխ	Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) խորհրդի նախագահ
Պ. Ռոլման	Դելֆթի տեխնոլոգիայի համալսարանի պրոռեկտոր
Մ. Վերա	Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության խորհրդի քարտուղար

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների և լրացումների քննարկման և հաստատման, ինչպես նաև հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգի քննարկման և հաստատման մասին

(Ռ. Թոփչյան, Ա. Աշոտյան, Վ. Գաբրիելյան, Կ. Դիտրիխ, Ա. Խաչատուրյան, Հ.Գրիգորյան, Տ. Սարգսյան)

1. **<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը** նշեց, որ ըստ ներկայացված նախագծի հավատարմագրման հանձնաժողովի անդամներն առաջադրվում են հոգաբարձուների խորհրդի կազմից և բաղկացած է 5 անդամից, որը թույլ կտա պահպանել հանձնաժողովի անկախությունը: Հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից: Նա տեղեկացրեց նաև, որ անկախ հոգաբարձուների խորհուրդը պետք է վերահսկի հավատարմագրման հանձնաժողովի աշխատանքը:

Անդրադառնալով ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի կողմից բարձրացված՝ հավատարմագրման հանձնաժողովի կազմի փոքր թվաքանակի խնդրին նշեց, որ նախապես որոշված էր, որ պիտի լինի 11 անձից բաղկացած հանձնաժողով, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է պրոֆեսիոնալ մասնագետների սակավաթիվ լինելու խնդիրը, նպատակահարմար համարեց հինգ անձից բաղկացած կազմը:

2. **ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը** նշեց, որ ներկայացված փաստաթղթերում առկա են մի շարք կանոնադրական փոփոխություններ, որոնք թույլ կտան այս կառույցը դիտել առավել անկաշկանդ և ազատ գործող և նպատակահարմար համարեց նաև կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կանոնադրության մեջ ամրագրել կետ, որի համաձայն անհրաժեշտ է ստեղծել նաև ծրագրային հավատարմագրման հանձնախմբեր, քանի որ այս պահին արդեն իրականացվել են երկու մասնագիտական կրթական ծրագրերի պիլոտային հավատարմագրման գործընթացներ.

2) հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեության բաժնում առկա են կետեր, որոնք իրավաբանների տեսանկյունից հակասում են ՀՀ գործող օրենսդրությանը և նպատակահարմար համարեց նախագիծը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ կարծիքի.

3) հավատարմագրման հանձնաժողովում՝ ինչպես պետք է կազմակերպվի ուսանողների մասնակցությունը, ինչպես պետք է ընտրվեն և ինչ իրավունքներով ու պարտականություններով.

4) հավատարմագրման հանձնաժողովի կազմում ընդամենը 5 անձ ունենալու հանգամանքը վստահելի չի դարձնում հանձնաժողովի աշխատանքը, քանի որ ինչքան փոքրաթիվ է կազմը, այնքան հեշտ է ենթարկել մանիպուլացիաների: Այդ իսկ պատճառով նպատակահարմար համարեց, որ կազմը բաղկացած լինի 11 անձից.

6) հանձնաժողովի կառուցվածքը նշված է տոկոսային հարաբերությամբ, որը համարեց ոչ նպատակահարմար և առաջարկեց ամրագրել թվով, որքան գործատու և ուսանող պետք է լինի:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանն անդրադառնալով Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) խորհրդի նախագահ Կ. Դիտրիխի այն օրինակին, որ եվրոպական երկրներում ուսանողներին նախապես վերապատրաստում են, որպեսզի նրանք մասնակցեն հավատարմագրման գործընթացին՝ նպատակահարմար համարեց, որ այդ վերապատրաստումն անցնեն հավատարմագրման հանձնաժողովի բոլոր անդամները, այլ ոչ միայն ուսանողները:

3. Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) խորհրդի նախագահ Կ. Դիտրիխը նշեց, որ Հոլանդիայում և Ֆլանդրիայում կողմ են, որ ուսանողներն այս գործընթացին ևս ակտիվ մասնակցություն ունենան և նրանք համարվում են լավագույն գործընկերներ, քանի որ սա նրանց ապագան է, այս համակարգի ակտիվ սպառողն են և մասնակիցը ու նրանց մասնակցությունը բավականին դրական արդյունք է տալիս: Եվրոպական շատ երկրների բուհերի փորձից ելնելով ուսանողներին նախապես վերապատրաստում են, որպեսզի նրանք մասնակցեն հավատարմագրման գործընթացին:

Առաջարկեց նաև, որ եթե ուսանողը որոշում կայացնելու իրավունքով ընդգրկվի խորհրդի կազմում, ապա պետք է ունենա համապատասխան գիտելիքներ այն մեթոդների վերաբերյալ, որոնց միջոցով անցկացվելու է հավատարմագրման գործընթացը:

Անդրադառնալով ծրագրերի հավատարմագրման հանձնախմբերում ուսանողների ներգրավվածությանը, համարեց այն ոչ այնքան ընդունելի, քանի որ այդտեղ պետք է զուտ մասնագիտական որոշումներ կայացվեն. ուստի նրանց մասնակցությունը հնարավոր չէ դեռևս փորձագիտական հմտություններ չունենալու պատճառով:

4. **Ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Խաչատուրյանը** նշեց, որ ուսանողների մասնակցությունն այս գործընթացում կարևոր է, բայց միայն քննարկումների տեսանկյունից և առանց որոշում կայացնելու իրավունքի:

5. **Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի տնօրեն Հ.Գրիգորյանը** նշեց, որ հանձնաժողովի կազմում ուսանողին ընդգրկելու պայման լինի նաև նրա որևէ կառույցին հաշվետու լինելու հանգամանքը:

6. **ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանը** նշեց, որ կանոնադրության մեջ նշված է, որ հիմնադրամն իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, որը հնարավոր է առաջացնի շահերի բախում և նպատակահարմար համարեց փաստաթուղթը համապատասխանորեն լրամշակել:

7. **ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** նպատակահարմար համարեց կանոնադրության մեջ նախատեսել կետ, որ ստեղծվելիք հավատարմագրման հանձնաժողովը նաև զբաղվի ծրագրային հավատարմագրման հանձնախմբերի վերահսկման աշխատանքներով: Հիմնադրամի կանոնադրության մեջ նշվեն ոչ միայն թե ովքեր կարող են ընդգրկվել հանձնաժողովի և ծրագրային հանձնախմբերի կազմում, այլ նաև հստակ ամրագրվեն ընտրության չափանիշները: Նպատակահարմար համարեց նաև Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) խորհրդի նախագահ Կ. Դիտրիխի կողմից ներկայացված առաջարկությունները ստանալ գրավոր և ըստ այդմ խմբագրել հիմնադրամի կանոնադրությունը:

8. **Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ խմբագրել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կանոնադրության նախագիծն արված առաջարկություններին համապատասխան, մասնավորապես՝

1) կանոնադրության մեջ նախատեսել կետ, համաձայն որի ստեղծվելիք հավատարմագրման հանձնաժողովը կզբաղվի նաև ծրագրային հանձնախմբերի վերահսկման աշխատանքներով.

2) հստակ նշել չափանիշներ, թե ինչպիսի կարողություններով օժտված անձինք կարող են ընդգրկվել հանձնաժողովի և հանձնախմբերի կազմերում.

3) ուսանողներին ընդգրկել միայն հանձնաժողովի կազմում, բայց ոչ ծրագրերի հավատարմագրման հանձնախմբերում.
4) հաշվի առնել նաև Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) խորհրդի նախագահ Կ. Դիտրիխի կողմից ներկայացված գրավոր առաջարկությունները.
5) հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի հարցը քննարկել ՀՀ ԿԳՆ իրավաբանական վարչության հետ և ըստ այդմ լրամշակել նախագիծը.
6) նախագծի լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն և ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչություն՝ կարծիքի:

2. Որակի ապահովում, ՀՀ բուհական համակարգի պարտավորվածությունը և հնարավորությունները

(Կ. Դիտրիխ, Տ. Սարգսյան)

Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության խորհրդի նախագահ Կառլ Դիտրիխը ներկայացրեց «Որակի ապահովում. ՀՀ բուհական համակարգի պարտավորվածությունը և հնարավորությունները» թեմայով զեկույցը, ինչպես նաև այս բնագավառում միջազգային փորձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ